ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 2022Թ. ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ Սիմոն Բաբայանի, անդամներ Արմինե Ֆանյանի, Արսեն Սարդարյանի, Գառնիկ Թուխտարյանի, Հունան Տեր-Վարդանյանի, Արթուր Պողոսյանի, Արմեն Շուքուրյանի և Արտյոմ Սուջյանի կազմով,

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի 5-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Սահմանել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի շրջանավարտների 2022թ. աշնան որակավորման քննության կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ սահմանված ժամանակացույցը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝ Սիմոն Բաբայան

Որոշում N 4/1-Լ
ք. Երևան
19 հոկտեմբերի 2022թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
19.10.2022թ. N 4/1-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահ՝
Սիմոն Բաբայան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 2022Թ. ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2022 թվականի աշնան որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) ունկնդիրների (շրջանավարտների) կողմից առձեռն կարող են տրվել մինչև **2022թ. հոկտեմբերի 28-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին):
2. Որակավորման քննություններն անցկացվելու են հետևյալ հասցեում՝ **ք.Երևան, Զաքյան 7-2**:
3. Սահմանված ժամկետում դիմում ներկայացրած ունկնդիրները որակավորման քննության
   1) առաջին փուլին մասնակցելու համար պետք է նախապես գրանցվեն քննության օրը՝ ժամը **09^{00}-ից** մինչև **09^{45}**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ,
   2) երկրորդ փուլին մասնակցելու համար պետք է գրանցվեն որակավորման հանձնաժողովի կողմից նշված ժամին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
4. Որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է 10.11.2022թ-ին և 11.11.2022թ-ին ժամը 10.00-ին:
5. Որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է 30.11.2022թ-ին և 01.12.2022թ-ին: Հավակնորդներից յուրաքանչյուրին ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը կծանուցի քննության ժամի մասին: